ՎԻՄԱԳՐԱԿԱՆ

ՎԻՄԱԳՐԱԳԻՏԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ ԽՈՐԱՆԱՇԱՏԻ ՎԱՆՔԻՑ[1]

13-րդ դարը, որպէս միջնադարեան Արցախի քաղաքական, հոգեւոր ու մշակութային վերելքի մի ժամանակաշրջան, նշանաւորուել է նաեւ բազմաթիւ վանքերի ու եկեղեցիների կառուցմամբ։

Մեր յօդուածի քննութեան առարկան է Խորանաշատի վանքն՝ իր պատմութեամբ, վիմագրերով ու ձեռագրերով։ Փորձ է արւում նորայայտ վիմագրերի ու ձեռագիր նիւթի համադրմամբ լուսաբանել Խորանաշատի պատմութեան որոշ էջեր, որոնք յատկապէս հրատապ են ատրպէյճանական բանակի կողմից վանքի պարբերաբար հրետակոծման եւ տեղի վիմագրերին սպառնացող ամենօրեայ վտանգի պայմաններում։

Խորանաշատի վանքը գտնւում է Փառիսոսի գաւառում, Ջինարի գիւղից 2 կմ դէպի հիւսիս արեւելք ընկած բարձրադիր ձորակում՝ ըստ Կ. Ղաֆադարեանի պատկերաւոր արտայայտութեան[2]։ Այդ խոշոր գրչութեան կեդրոնի ու վարդապետարանի հիմնադիրն է համարւում Վանական Վարդապետ Տաւուշեցին (1181-1251 թթ.)։ Ըստ յայտնի աղբիւրների՝ Մխիթար Գոշի աշակերտ Վանական Վարդապետը, վարդապետ օժտուելով (1207 թ.), իր ծննդավայր Տաւուշ գիւղի մօտակայքում հիմնել է Խորանաշատ վանքը՝ իշխան Վահրամ Գ. Գագեցու հովանաւորմամբ, եւ դարձել առաջին վանահայրն ու ուսուցչապետը[3]։ Պէտք է կարծել, որ վանքի անուանումը, շատ խորաններ ունեցող կամ էլ Խորանակերտ, կնքուել է հէնց Վանականի կողմից։

Այստեղ սովորել են այնպիսի գիտնական-աստուածաբաններ, ինչպիսիք են Կիրակոս Գանձակեցին, Վարդան Արեւելցին, Գրիգոր Ակներցին, Առաքելը, Ստեփանոս Աղթամարցին, Արտազի առաջնորդ ու նշանաւոր աստուածաբան Յովսէփ Վարդապետը, Խաչէնի քաղաքական կեանքում մեծ ազդեցութիւն ունեցող Մարկոս Վարդապետը, մեծահռչակ

---

[1] Սոյն հաղորդումը պատրաստուել էր որպէս զեկուցում՝ ներկայացնելու համար ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեան ինստիտուտի կազմակերպած «Հայաստանը եւ արեւելա-քրիստոնէական քաղաքակրթութիւնը» գիտաժողովին (2016 թ.)։ Մի ցաւալի թիւրիմացութիւն՝ համակարգչիս մէջ եղել է նման վերնագրերով երկու փաստաթուղթ, մէկը՝ հատուած Թ. Մինասեանի գրից (**Թ. Մինասեան**, Արցախի գրչութեան կենտրոնները, Երեւան, 2015), միւսը՝ զեկուցմանս նիւթը։ Գիտաժողովի կազմ-կոմիտէին սխալմամբ ուղարկել եմ Թ. Մինասեանի գրի հատուածը, եւ այն թիւրմացաբար տպագրուել է։ Կատարուածի համար ներողամտութիւն եմ հայցում կազմակերպիչներից, մասնաւորապէս պ.գ.դ. Ալեքսան Յակոբեանից, Թ. Մինասեանից եւ ընթերցողներից։ Շնորհակալութիւն եմ յայտնում «Սիոն»-ի խմբագրական կազմին՝ թիւրիմացութեան շտկման նպատակով բուն զեկուցումս տպագրելու համար։

[2] **Կ. Ղաֆադարեան**, էջեր Հայոց միջնադարեան մշակոյթի եւ պատմութեան, Երեւան, 2007, էջ 279։

[3] Խորանաշատի վանքի, վանքում արտագրուած ձեռագրերի ու Վանական Վարդապետի կենսագրութեան մասին աւելի մանրամասն տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, Պատմութիւն Հայոց, աշխատ. **Կ. Մելիք-Օհանջանեանի**, Երեւան, 1961, էջ 243-252 (Գլուխ ԻԴ. Վասն գերութեան վարդապետին Վանականայ եւ որոց ընդ նա), **Հ. Ոսկեան,** Յովհաննէս վանական եւ իւր դպրոցը, Վիեննա, 1922, էջ 1-122, **Լ. Խաչիկեան**, «Յաղագս տարեմտին ի Վանական վարդապետէ ասացեալ», ԲՄ, թիւ 1, 1941, էջ 151-169, **Գրիգոր Վրդ. Ակներցի**, Պատմութիւն թաթարաց, Երուսաղէմ, 1974, էջ 23, 27, 36։

փիլիսոփայ Սոսթենէսը, «Վարք Սրբոցի» կազմող ու խմբագիր, Ներքին Խաչէնի եպիսկոպոս Իսրայէլը, Գրիգոր Աղթամարցին եւ այլք։

Խորանաշատի վանքում գրուած ձեռագրերից Մատենադարանում են պահպանւում №№ 1563, 2101, 2273, 3536, 5601, 5452, 6106, 6669, 8882[4]։ Գիտական կարեւոր նշանակութիւն ունի մասնաւորապէս Մաշտոցեան Մատենադարանի Խորանաշատում 1223 թ. ընդօրինակուած № 2101 ձեռագիրը։ Այս ձեռագրի ուսումնասիրութեամբ զբաղուել է Ն. Մառը, ով, համեմատելով այդ ձեռագիրը Շատբերդի վրացերէն մի ձեռագրի հետ, եզրայանգել է, որ վրացական ձեռագիրը թարգմանութիւնն է Խորանաշատի № 2101 ձեռագրի[5]։

Վանականի անունը յաճախ է հանդիպում Խորանաշատի վանքի գրիչների յիշատակարաններում։ Օրինակ՝ ՄՄ 1563-ի Մարտիրոս գրիչը այն անուանում է Վանական Վարդապետի վանք. «Ի վանս Վանական Վարդապետի, առաջնորդ գոլով Պետրոս Վարդապետի, ձեռամբ Մարտիրոսի բազմամեղ ծառայի, ի ծերութեաւն ժամանակի...»[6]։

Խորանաշատի վանքի պատմութեան լուսաբանման մէջ կարեւոր դեր ունեն նաեւ վիմագրերը, որոնցով զբաղուել են վիմագրագէտներ Ս. Բարխուդարեանը, Կ. Ղաֆադարեանը, Ս. Սաղումեանը։ 2007 թ. յետմահու լոյս տեսաւ Կ. Ղաֆադարեանի «Էջեր Հայոց միջնադարեան մշակոյթի եւ պատմութեան» աշխատութիւնը, որտեղ հրատարակուեցին Խորանաշատի վանքի 33 արձանագրութիւններ։ Վերջերս մենք նոյնպէս այցելեցինք թշնամու թիրախ դարձած Խորանաշատի վանքը, որտեղ լուսանկարեցինք բոլոր արձանագրութիւնները։ Համեմատելով լուսանկարները Կ. Ղաֆադարեանի վերծանութիւնների հետ՝ գտանք որոշակի տարբերթերցումներ։ Այսպէս տարբերթերցում կայ հետեւեալ արձանագրութիւնների մէջ.

1. Ժամատան արեւմտեան պատի վրայ ագուցուած խաչքարին կարդում ենք.

ԹՎ[ԻՆ] ՉԲ (1253)։ ԵՐԿԻՐ ՊԱԳԱՆԷՔ / ՅԱՂԱԻԹՍ ՅԻՇԵՍՋԻՔ։

Կ. Ղաֆադարեանի ընթերցած արձանագրութեան սկզբում[7] առկայ եւս երեք տառերը՝ ///ՆԻՅ (նկ. 1), այլեւս չեն նշմարւում։

2. Տաճարի արեւելեան պատի վրայ, դրսից կարդում ենք (նկ. 2).

ՅԱՆՈՒՆ ԱԾ, ԵՍ ԳՐԻԳՈՐ, ՈՐԴԻ ՎԱՍԱԿԱ ՄԻՋՆԱՇԻՆԵՅԻՆ[8], ԳՆԵՅ/Ի ԶԿԱԻՇՔԱԿԱՐԱՆՅ ԵՒ ՏՎԱՔ Ի ՍԲ ԱԾԱԾԻՆՍ ԽՈՐԱՆԱՇԱՏՈ։ / ՎԱՐԴԱՊԵՏՍ ՀԱՍՏԱՏԵՅ ՄԵՋ :Բ։ ՊԱՏԱՐԱԳ ՏԱԻԻ ՀՈԳՈՅՆ ԳԱԼԸ/ՍՏԵԱՆՆ ...։

---

[4] Տե՛ս Յուցակ Ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ա., կազմեցին՝ **Օ. Եգանեան**, **Ա. Ջէյթունեան**, **Փ. Անթաբեան**, Երեւան, 1965, Յուցակ Ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Բ., կազմեցին՝ **Օ. Եգանեան**, **Ա. Ջէյթունեան**, **Փ. Անթաբեան**, Երեւան, 1970։

[5] Տե՛ս **Գ. Մուրատեան**, «Բարոյախօս (Physiologus). Հայերէն խմբագրութիւններ», Բանբեր Մատենադարանի, հմր. 22, Երեւան, 2016, էջ 291-330։

[6] Մայր Յուցակ հայերէն Ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ե., կազմեց՝ **Օ. Եգանեան**, Երեւան 2009, էջ 484։

[7] **Կ. Ղաֆադարեան**, Էջեր Հայոց միջնադարեան մշակոյթի եւ պատմութեան, էջ 281։

[8] Միջնաշէն – գիւղատեղ ՀՀ Տաւուշի մարզում (յուշարձանի № 10.22.3)

Կ. Ղաֆադարեանի մօտ «ԶԿԱՒՇՔԱԿԱՐԱՆՑ» բառը վերծանուած է «ԶԿԱՒՇՔԱՐԱՆՑ», իսկ «ՏԱՒԻ» բառը «ՏԱՒՆԻ», ինչը ընթերցողի ուղղման արդիւնք է։ «ԶԿԱՒՇՔԱԿԱՐԱՆՑ» ասելով, հաւանաբար, նուիրատուն նկատի է ունեցել որեւէ հանդամաս կամ այլ անշարժ գոյք, որը նա գնել է Կոշկակարանց տոհմից (Յաճախ տոհմանունները ձեռք էին բերւում համապատասխան այդ տոհմի մասնագիտական գործունէութեան։ Հաւանաբար, Կոշկակարանց տոհմը զբաղւում էր կոշկակարութեամբ) ու նուիրել վանքին։

Յատկապէս կարեւոր են Ս. Բարխուդարեանի արխիւից մեզ հասած Խորանաշատի լուսանկարները[9]։ Այդ լուսանկարներից մի քանիսը ստացել են սկզբնաղբիւրի նշանակութիւն, քանի որ դրանցում արտացոլուած արձանագրութիւնները, հաւանական հրետակոծութեան հետեւանքով, չեն պահպանուել, մասնաւորապէս չորս արձանագրութիւն (նկ. 3), որոնք կրկնուելով կցուած են առանձին փորագրուած խաչերի[10]։ Լուսանկարում, սակայն, երեւում է միայն երկու նուիրատուական խաչ։ Կարելի է ենթադրել, որ խաչերը չորսն են եղել՝ ըստ հակիրճ յիշատակագրումների.

1. ՍԲ Խ[Ա]Զ / ԲԱ[ՐԵԽԱՒ]Ս Ե ԶՍԲ / ՍԲ Խ[Ա]ՁՍ ԲԱ[ՐԵԽԱՒ]Ս Ե ԹԻՆ/ Բ //// ԱՆԻՆ:

2. Երկրորդ արձանագրութիւնը բաւականին ընդարձակ նուիրատուական վիմագրի մի բեկոր է (Լուսանկարը տե՛ս ստորեւ).

[Ս]ՏԱՓԱՆ[Ո]ԻՆ ՏԱՒՆ[ԻՆ] / /// Ի ԲԵՐԱՔ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ / ԶԱՒՐՇՆԵՑԱՔ ՀԱՆԴԻՍԻՒՔ / [ԲԱՐԵ]ԽԱՒՍ [Ա]Ռ ՔՐԻՍՏՈՍ ՅԻՍՈՒՍ ՀԻ // ՈՐ //// ՈՐՔ ԵՐ[ԿՐՊԱԳԷՔ] ... :

Կարելի է կռահել, որ սուրբ Ստեփաննոսի տօնին խաչքար է կանգնեցուել եւ օրհնուել հանդէսով՝ ի բարեխօսութիւն եւ ի երկրպագութիւն խաչի։ Հաւանաբար, «օրհնել» բառում Հ-ի փոխարէն, բարբառային արտասանութեանը համա-

---

[9] Լուսանկարների տրամադրման համար շնորհակալ ենք ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան ու ազգագրութեան ինստիտուտի վիմագրութեան բաժնի աշխատակցուհի՝ **Կ. Ասատրեանին**:

[10] Վանքին կամ եկեղեցուն տրուող փոքր չափի նուիրատուութիւնները «արձանագրւում» էին՝ եկեղեցու պատին փորագրելով խաչաքանդակներ՝ աւելի յաճախ առանց որեւէ գրաւոր յիշատակ կամ վիմագիր թողնելու:

պատասխան՝ գրուել է Շ, որը նման է Ծ-ի։ Լուսանկարում առկայ քարի հաստութիւնից կարելի է ենթադրել, որ այն պատուանդան է ծառայել բաւականին խոշոր մի խաչքարի համար, որի կորուստը, անշուշտ, ցաւալի է։

Սեդրակ Բարխուդարեանի արխիւում է գտնւում, հաւանաբար, նաեւ այն քարայրային եկեղեցու լուսանկարը, որտեղ պատսպարուել էր Վանական Վարդապետը՝ Ջալալեդդինի արշաւանքի ժամանակ։ Լուսանկարը տե՛ս ստորեւ.

Ըստ ինձ ուղեկցող հետախոյզների՝ աւելի վեր՝ ատրպէյճանական դիրքերին մօտ հատուածում է գտնւում երկու մատուռ, որոնցից մէկը հիմնայատակ աւերուել է թշնամու կողմից, եւ մի միջնադարեան գերեզմանոց, որի ուսումնասիրութիւնն այժմ անհնար է հասկանալի պատճառներով։

Խորանաշատի վանքը՝ միջնադարեան Արցախ-Ուտիքի խոշորագոյն կրօնական ու գիտական կեդրոններից մէկը, դեռ շատ ասելիքներ ունի աշխարհին, որոնք հնարաւոր կը դառնայ բացայայտել խաղաղութեան պայմաններում։ Հակառակ դէպքում ցանկացած ուսումնասիրող իրեն վտանգի կ՚ենթարկի՝ ամէն անգամ ատրպէյճանական դիպուկահարների կրակի տակ վանքն ուսումնասիրելու գնալով։

ՀԱՅԿ ՅԱԿՈԲԵԱՆ

Պ.գ.թ., Աւագ գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտ, Մատենադարան. Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անուան հին ձեռագրերի ինստիտուտ, Հայ-սլաւոնական ռուսական համալսարան, Արեւելագիտութեան ինստիտուտ, դասախօս